**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**«Սենդ ընդ Սթոն մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Գետաշենի ԱԿԽ հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2025-2028թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

**19.05.2025թ.** **Գետաշեն բնակավայր**

- Հանրային լսմանը մասնակցում էին՝
- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ռուզան Մակինյանը,
- Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ա. Հովհաննիսյանը,
- Արմավիրի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Կ. Մարգարյանը,
- Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Ռ. Մարտիրոսյանը,
- «Սենդ ընդ Սթոն մայնինգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.Բաբիյանը, ընկերության այլ ներկայացուցիչներ,
- Գետաշեն բնակավայրի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2025թ. մայիսի 19- ին ժամը 15:00-ին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Մեծամոր համայնքի Գետաշենի ԱԿԽ հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2025-2028թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ա. Հովհաննիսյանը: Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ **Ռուզան Մակինյանը,** ով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները, նշեց, որ փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, տարբեր գերատեսչություններ, Արմավիրի մարզպետարանը, որոնց և իր կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա նախաձեռնողը լրամշակել է ՇՄԱԳ հաշվետվությունը:

**Ռուզան Մակինյանը** նշեց, որ երկրաբանական ուսումնասիրությունը իրականացվելու է թվով 14, 7,5-8 մետր խորությամբ հորատանցքերի միջոցով, որոնք տեղակայված են լինելու 10 հա հողատարածքի վրա: Հորատանցքերի պատերից վերցվելու են նմուշները,

որոնք անմիջապես փորձաքննությունից հետո հետլիցք է իրականացվելու, հողային զանգվածի պահեստավորում իրականացված չէ: 14 հորատանցքերի ուսումնասիրության աշխատանքները լինելու են երկու տեսակի՝ դաշտային և լաբորատոր: Բուն դաշտային աշխատանքները տևելու են մոտ 15 աշխատանքային օր: Ընդհանուր գործունեության ընթացքում հայցվող տարածքում աշխատելու է մեկ էքսկավատոր տեսակի մեքենա: Համաձայն հաշվետվության՝ հողակտորի խոնավ հատվածներում հողի փոշենստեցում չի առաջանալու, իսկ ավելի չոր վիճակում գտնվող և միջդաշտային ճանապարհներին մոտ գտնվող հատվածներում նախատեսված են փոշենստեցման աշխատանքներ, որտեղ նմուշը տեղափոխող մեքենաներին կուղեկցեն ջրցան մեքենաներ: Դաշտային աշխատանքներից հետո նմուշները կտեղափոխվեն հատուկ լաբորատորիաներ, որտեղ կհետազոտվեն ավազի որակական և քանակական հատկանիշները: Խորհրդային տարիներին այս հողատարածքներում հաստատված պաշարներ կային, ուստի հիմա տեղի է ունենալու պաշարների վերագնահատում:

Այնուհետև Ռ. **Մակինյանը** հարց ուղղեց «Սենդ ընդ Սթոն մայնինգ» ՍՊ ընկերության ներկայացուցչին՝ մեկնաբանելու հայցվող տարածքների հողային պատկանելությունը և ինչ հեռավորության վրա է գտնվում մոտակա հողատարածքներից:

Ընկերության ներկայացուցիչը հակիրճ ներկայացրեց նախատեսվող աշխատանքները և ավելացրեց, որ իրենց նպատակն է այս փուլում պարզել՝ արդյոք հայցվող տարածքում կա հանք, թե ոչ:

Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ հայցվող հողատարածքը մասնավոր սեփականություն է, սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը առկա է և կարող են ներկայացնել ՇՄԱՓԿ:

**Ռ. Մակինյանը հավելեց**՝ որպես սոցիալական ազդեցություն կարևոր է, որ հայցվող հողատարածքի հարևան այգիների սեփականատերերը իրազեկվեն նախատեսվող գործունեության վերաբերյալ և այսօրվա բուն նպատակը կայանում է ոչ միայն նրանում, որ ներկայացվի նախատեսվող աշխատանքները, այլև ինչ սոցիալական և բնապահպանական ազդեցություն կարող է կրել բնակավայրը նախատեսվող գործունեության արդյունքում:

**Ռ.Մակինյանը խոսքը** փոխանցեց ներկաներին՝ հայտնել իրենց կարծիքը նախատեսվող գործունեության վերաբերյալ, քանի որ հանրային լսմանը ներկա էին նաև հայցվող հողատարածքի հարևան տարածքների սեփականատերերը:

Բնակիչներն հայտնեցին իրենց մտահոգությունը նախատեսվող գործունեության հետևանքով հայցվող տարածքի հարևանությամբ գտնվող իրենց այգիների լուրջ վնասների վերաբերյալ: Ընկերության ներկայացուցիչները երաշխավորեցին, որ վնասներ չեն հասցվի իրենց հողերին, սակայն բնակիչները բացառեցին այդ փաստը, քանի որ նախկինում այլ կազմակերպությունների կողմից իրականացված նմանատիպ գործունեության արդյունքում առաջացած փոշին և աղբը շոշափելի վնասներ են հասցրել ծառերի բերքատվությանը և բերքի որակին:

Հանրային լսման արդյունքում բնակավայրի կողմից նախատեսվող գործունեությանը տրվեց բացասական դիրքորոշում:

Հանրային լսումն ամբողջությամբ լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցուցակը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան

«Սենդ ընդ Սթոն մայնինգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.Բաբիյան